«Ծիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ
2024-2025
Մայրենի (5-րդ դասարան)

Անուն Ազգանուն _____

Դպրոց _____

Դասարան _____ Խումբ _____

ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ

Հայ լեզուն տոնն է հայուն աշխարհիս չորս ծագերուն...

Մուշեղ Իշխան

1. Ընդգծի՛ր այն բառերը, որոնց երկրորդ արմատն արտասանվում է բաղաձայն հնչյունով (2 միավոր):

Վրաերթ, կիսաեփ, ուղերթ, պարզորոշ, երկարատոն, բարձրորակ, արջառոս, թռչնորս:

2. Գտի՛ր օրինաչափությունը, լրացրո՛ւ շարքերը 2-ական բառերով (2 միավոր):

ա) օձել, օձանակ, օձանելիք

բ) դեղնազօձ, ոսկեզօձ, արծաթազօձ

3. **Ի՞նչ պիտի անես, որ դառնա՝** (2 միավոր):

Գալ-ը վայրի կենդանի—---գայլ-------

Գիրք-ը թմբլիկ, գիրուկ—---գիրկ-------

Վարք-ը պատիվ, հեղինակություն—-վարկ-----

Պապակ-ը իղձ, ցանկություն—----------փափագ-----

4. **Ի՞նչ ձայն է հանում՝** (3 միավոր):

Հուշում. ձայն նշանակող բառերը դի՛ր ներկա ժամանակով, օրինակ՝ *խոզը խոխոռում է:*

Ոչխարը .....մայում է.....

ROUND SQUARE · IB · CIS MEMBER

Կովը.....բառաչում է.....

Կատուն.....մլավում է.....

Չին.....խրխնջում է /վրնջում է.....

Ագռավը.....կռկռում է../ կռռում է.....

Զանգը .....ղողանջում է/ հնչում է.....

5. **Գտի՛ր և վտարի՛ր ավելորդին՝ բառի վերևում հանածի նշան դնելով** (2 միավոր):

Ուրախ, զվարթ, թախծոտ, խնդուն

Հովիկ, հողմ, մրրիկ, մրիկ

Թևածել, սավառնել, սողալ, ճախրել

Դալուկ, գունատ, դժգույն, գունեղ

6. **Գուշակի՛ր** բառերը, **հետևի՛ր ցուցումներին, գումարի՛ր համապատասխան արմատները կամ ածանցները և ստացված բառը գրի՛ր հավասարման նշանից հետո** (3 միավոր):

Արու ոչխար + *ակ* վերջածանց=խոյ+ակ-խոյակ

Վար-ի հականիշը + **ելնել**-ի արմատը + **ոտք**-ի -ածանցը=վեր+ել+ք-վերելք

Տարի-ի հոմանիշը + ա + **հին**-ի հականիշը=ամ+ա+նոր-ամանոր

Ժպտուն-ի արմատը + **դեմք**-ի հոմանիշը=ժպիտ+երես-ժպտերես

Երանգ - ի հոմանիշը + ա + **սիրուն**-ի հոմանիշի արմատը=գույն+ա+գեղ-գունագեղ

Թույլ -ի հականիշը + ա + **կռել**-ի արմատը=ամուր+ա+կուռ-ամրակուռ

7. **Հեքիա՛թ հորինիր հյուր-քամելեոն երկանդամով (6 միավոր):**

Գնահատման սանդղակ

Միավոր	Նկարագրություն
6	1. Հանդես է բերել ստեղծագործական մոտեցում. հորինել է ինքնօրինակ հեքիաթ: 2. Պահպանել է հեքիաթի ժանրին բնորոշ ձևը և ընթացքը՝ սկիզբ, ընթացք, ավարտ: 3. Ապահովել է հեքիաթի բարոյախրատական ենթիմաստի դրսևորումը: 4. Կիրառել է հարուստ և պատկերավոր բառապաշար: 5. Ուղղագրական, կետադրական, քերականական սխալներ, վրիպակներ հիմնականում չկան:
5	1. Հորինել է հեքիաթի ժանրին բնորոշ պատմություն: 2. Պահպանել է հեքիաթի ժանրին բնորոշ ձևը և ընթացքը՝ սկիզբ, ընթացք, ավարտ:

	3. Ապահովել է հեքիաթի բարոյախրատական ենթիմաստի դրսևորումը: 4. Կիրառել է բավական հարուստ բառապաշար; 5. Ուղղագրական, կետադրական, քերականական 2-3 սխալներ և վրիպակներ կան:
3-4	1. Պահպանել է հեքիաթի ժանրին բնորոշ ձևը և ընթացքը՝ սկիզբ, ընթացք, ավարտ: 2. Ստեղծարարություն չի դրսևորել. հեքիաթը ինքնօրինակ չէ: 3. Բառապաշարն աղքատիկ է: 4. Հեքիաթի բարոյախրատական ենթիմաստը չի դրսևորվել: 5. Ուղղագրական, կետադրական, քերականական 5-6 սխալներ և վրիպակներ կան:
1-2	1. Չի պահպանել հեքիաթի ժանրին բնորոշ ձևը և ընթացքը՝ սկիզբ, ընթացք, ավարտ: 2. Ստեղծարարությունը և երևակայությունը բացակայում են: 3. Բառապաշարն աղքատիկ է: 4. Ուղղագրական, կետադրական, քերականական 7-8 սխալներ և վրիպակներ կան:
0	Հեքիաթը չի գրել: